

ԱՉԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒՅԹԻ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 2. Տարի, Թիւ 229, Ուրբաթ, 02 ՄԱՅԻՍ, 2014

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ ՊԱՀՐԷՅՆԻ ՄԷՋ



Ուրբաթ, 25 Ապրիլին, Ս. Յարութեան տօնին առիթով Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպուեան մեկնեցաւ Պահրէյն, ուր իր անդրանիկ պատարագը մատուցեց տեղւոյն Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ մէջ: Պատարագին ներկայ գտնուեցան Պահրէյնի հայ համայնքը եւ Խուպարէն (Սէուտական Արաբիա) ժամանած խումբ մը հաւատացեալներ: Քարոզին սկիզբը Հայր Սուրբը նախ ներկայ հաւատացեալներուն փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հայրական ողջոյններն ու օրհնութիւնները եւ ապա անդրադարձաւ Ս. Յարութեան խորհուրդին: Ան գնահատեց

Պահրէյնի եւ Խուպարի մեր ժողովուրդի զաւակներուն հաւատքը եւ թելադրեց միասնականութիւն՝ կազմակերպելու եւ աշխուժացնելու շրջանի հոգեւոր ու ազգային կեանքը: Պատարագի ասարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն Հայոց Յեղասպանութեան նահատակներու հոգիներուն համար:

Պատարագէն ետք Հայր Սուրբը ճաշկերոյթի սեղանի շուրջ առիթը ունեցաւ մօտէն



ծանօթանալու համայնքի զաւակներուն եւ լսելու անոնց առաջարկներն ու մտահոգութիւնները:

www.armenianprelacykw.org

Հինգշաբթի, 23 Ապրիլ 2014ին, Հայոց Մեծ Եղեռնի 99րդ ամեակի հսկման երեկոյի ընթացքին, Քուէթի Հայ Դատի խօսքը փոխանցեց բժ.ընկ. Մեսրոպ Թասլաքեան: Ստորև կը հրատարակենք ամբողջութեամբ:

Այսօր մենք հասած ենք Մեծ Եղեռնի հարիւրամեակի շեմին:

Մէկ տարի եւս՝ եւ ոչ միայն կը կանգնինք հարիւր տարուայ եղելութեան փաստին առջեւ, այլեւ ետ կը նայինք մեր անցած ճանապարհին, մաքառումներուն, ձախողութեանց ու յաջողութեանց, մեր դատը, մեր արդար պահանջները մէկ մասնիկը դարձնելու մարդկութեան խղճին ու հաւատամքին:

Մարդկութեան պատմութեան մէջ, ջարդեր անկասկած պատահած են. բայց, արդի պատմութեան «քաղաքակիրթ» մարդկութեան աչքին առջեւ, առաջին անգամն ըլլալով, այս տարողութեամբ, ծրագրուած սիստեմատիկ բնաջնջում մը տեղի կ'ունենար: Ջարդ, որ չէր միտեր պարզապէս ազգի մը ժողովրդագրական պատկերը փոխել իր պատմական հայրենիքին մէջ, ջարդ մը, որ չէր ուղղուած միայն տուեալ ժողովուրդին մէկ յարնուանութեան, մէկ կուսակցութեան կամ մէկ դասակարգին դէմ, այլ՝ կը միտեր բնաջինջ ընել, ի սպառ վերացնել ամէն մէկ անհատ: Սոյն արարքը «Ցեղասպանութիւն» որակուեցաւ՝ հրէական Ռոջակիզումէն վերապրած Ռաֆայէլ Լեմքինի կողմէ 1944-ին: Շատ չանցած ծնունդ տուաւ այլ նմանատիպ համատարած ջարդեր 20-րդ դարու ընթացքին, որ հանդիսանալով հանդերձ գիտական մեծագոյն նուաճումներու դարը, դժբախտաբար, եղաւ նաեւ մեծագոյն պատերազմներու, ոճրային գաղափարախօսութեանց եւ աննախընթաց կոտորածներու դարը: Ռաֆայէլ Լեմքինի իսկ վկայութեամբ՝ «Ցեղասպանութիւնը նախ պատահեցաւ հայ ժողովուրդին եւ ապա անկէ քաջալերուած՝ Հիթլեր գործի անցաւ»:

Մեր նպատակը չէ անշուշտ ցեղասպանութեան թեմայի մէջ խորանալ, ծնունդ տուող պատճառները եւ պատմականը վերլուծել. անցեալ տասնամեակներուն այս թեման լուսապէս ծեծուած եւ ուսումնասիրուած է բազմիցս: Ըլլայ բեմերէն, մամուլով, հեռատեսիլով եւ գրականութեամբ: Էական է յիշել եւ շեշտել թէ՛ հայկական Ցեղասպանութիւնը սկիզբը եղաւ եւ քաջալեր օրինակը՝ 20- րդ դարու միւս ցեղասպանութեանց, քանի որ ցեղասպանութեան անպատժելիութիւնը կրկնել կու տայ պատմութիւնը, երբ անգոր է անոր կանխարգիլման դիմաց մարդկութիւնը եւ մանաւանդ հզօր եւ քաղաքակիրթ կոչուող ազգերը: Հրէական ողջակիզումը Ռուանտայի եւ Սերեպրենեցայի համատարած սպանդները: Հիթլերի պատգամը, Բ. Աշխարհամարտի նախօրեակին երբ յստակօրէն կը շեշտէր թէ, «Հրաման տուի մահուան գունդերուս որ անխնայ բնաջնջեն Լեհ ցեղին պատկանող ամէն անհատ, անկախ սեռէ եւ տարիքէ. ի վերջոյ, այսօր ո՞վ կը յիշէ հայոց բնաջնջումը»:

Բոլորս անգիր գիտենք, սորված ենք մեր մանկութենէն ի վեր, դպրոցէն, Ապրիլ 24-ի ամենամեայ սգատօներէն, անհամար դասախօսութիւններէ թէ երիտօրրքական կառավարութիւնը ինչպէս յղացաւ եւ գործադրեց իր հայաջինջ ծրագրերը Ա. Աշխարհամարտի ընթացքին: Այս փաստերը ծանօթ են ոչ միայն մեզի, այլ ամբողջութեամբ են հազարաւոր թուղթերով, որոնք կը մնան համապատասխան կառավարութեանց արխիւներուն մէջ: Պատմաբանները ուսումնասիրած են եւ կը շարունակեն ուսումնասիրել, գիտական գիրքեր եւ յօդուածներ նուիրել այս թեմային: Բայց ժամանակի ընթացքին սորվեցանք ու ըմբռնեցինք նաեւ թէ խօսելով ու գրելով հատուցում չենք ստանար:

Հայ ժողովուրդը այս սգատօնական շրջափակին դուրս յաջողեցաւ գալ Մեծ Եղեռնէն միայն 50 տարի անց, երբ Սփիւռքի եւ մանաւանդ Խորհրդային Հայաստանի մէջ հարիւր հազարներով, մէկ մարդու նման ողողեց փողոցներն ու հրապարակները. ո՛չ միայն վերահաստատելու իր յանձանքը նահատակներուն նկատմամբ, այլ պահանջելու հատուցում եւ հայրենի կորուսեալ հողերու վերադարձ:

1965- ին, Ժամանակի հրամայականով, կորուստի ցաւն ու մորմոքը տեղի տուին վրիժառութեան զգացման, հատուցման պահանջի եւ լռութեան պատը քանդելու ճիգին դիմաց:

Ժամանակը, ինչպէս կ'ըսեն, կը բուժէ վերքերը: Ներկայ սերունդը չէ ապրած Եղեռնի սարսափը, զայն լսած ըլլալով միայն իրենց մեծ հայրերէն ու մեծ մայրերէն, որոնց ճնշող մեծամասնութիւնը դժբախտաբար ողջ չեն այլեւս, որպէս կենդանի վկայ, բայց կը մնայ հատուցման պահանջքի արդարութիւնը, մեր կորուսեալ հողերու եւ ինչքերու վերադարձի անժամանցելի հրամայականը: Հոս է, որ հարց կ'ուղղենք մենք մեզ: Ի՞նչ է մեզմէ պահանջուածը, ի՞նչ է մեր մարտավարութիւնը:

Յստակ է, որ եթէ նժարի մէջ դնենք, մեր եւ մեր դարաւոր ուխտին կարելիութիւնները, նախանձելի վիճակի մէջ չենք գտնուիր: Այսօրուան Թուրքիան, ռազմականօրէն հզօր, թիւով եւ սպառազինութեամբ, տնտեսական ենթակառոցով, քաղաքական կապերով եւ փորձառութեամբ եւ նոյնիսկ ազգային գաղափարախօսութեամբ՝ «թուրքիզմով», գերիվեր է մեր պատմական հայրենիքի մնացորդ փոքր հանրապետութեան եւ սփիւռքի միասնական ուժերէն, պարտադրելով մեզ որ ակամայ ծուարինք ռուսական նոր կայսրութեան հովանիին տակ, յարմարեցնելով մեր քաղաքատնտեսական դիրքը: Դժբախտաբար դէպի լաւը չէ փոխուած դարերու ընթացքին. կը մնանք, թշնամի անբարեացակամ, կամ լաւագոյն պարագային երկդէմի դրացիներով շրջապատուած: Կասկած չկայ, որ ցեղասպանութեան ճանաչումը օտար պետութեանց կողմէ կարելոք եւ անյետաձգելի առաջադրանք է, բայց անոր զուգահեռ եւ անկէ ալ առաջ օղի եւ ջուրի նման կենսական է մեր աշխարհացրիւ ուժերու մէկտեղումն ու յստակ, ծրագրուած նպատակային գործելաճը: Հրեայ ազգը, դարերով ճնշուած եւ հալածուած աշխարհաքաղաքական վատ պայմաններու տակ յաջողեցաւ եւ պարտադրեց զինքը հալածած մարդկութեան, ոչ միայն ճանչնալ ու դատապարտել 6 միլիոն հրեաներու ողջակիզումը, ստանալ նիւթական եւ բարոյական հատուցում, այլեւ նոյնիսկ հող ու երկիր, որմէ արտաքսուած էր երկու հազարամեակ առաջ:

Այս բոլորը շնորհիւ միայն ու միայն ներքին ուժի ներկայութեան, ապագայի նկատմամբ հաւատքի, մարդկային ու նիւթական կարելիութեանց ծայրահեղ կեդրոնացմամբ եւ յստակ, ծրագրուած եւ հետեւողական քաղաքականութեամբ անոնք չգրադեցան միայն սգահանդէսներով, ողբուկոծով ու խնդրանքներով այլեւ օգտագործեցին ամէն միջոց անխտիր, ամէնէն առաջ իրենց տնտեսական հզօր ներուժը, քաղաքական կապերը եւ պահանջել հարկին նոյնիսկ զէնք վերցուցին իրենց նպատակին հասնելու համար: Արդի՞նքը: Ողջակիզումէն հազիւ 3 տարի անց հիմնեցին իրենց պետութիւնը շատ աւելի հզօր ու բարգաւաճ քան զիրենք շրջապատող, թիւով եւ նիւթական միջոցներով հարուստ թշնամի երկիրները:

Թերեւս մեզմէ շատերուն հաճելի չթուի այս համեմատականը, բայց պետք է ընդունիլ որ Հրեական պետութեան գոյութիւնը դասական օրինակ մըն է ծրագրուած, նպատակասլաց գործելակերպի:

Մենք այսօր, Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումէն 23 տարի անց տակաւին, դժբախտաբար կը գտնուինք, ջլատուած եւ փոխադարձ անվստահութեան մթնոլորտի մէջ:

Խորհրդային կայսրության փլուզումն էտք, Հայաստանի նման նախկին խորհրդային հանրապետությանց, ժառանգած պետական-ընկերային թոյլ կառուցուածքը, անցումային շրջանի, աղետաբեր շուկայական խարխափումները եւ մանաւանդ խորհրդային շրջանի վատ բարքերը տակաւին բոլորովին չեն անհետացած հայրենի ժողովուրդին հոգեբանութենէն: Միւս կողմն, իրերայաջորդ կառավարութեանց տնտեսական անյաջող քաղաքականութիւնը, հարստութեանց անհաւասար բաժանումը եւ աստոր արդիւնք նոր նիւթապէս հզօր եւ ամենակարող դասակարգի մը առաջացումը, գումարած Հայաստանի տնտեսական շրջափակման եւ բնական հարստութեանց սակաւութեան հետ յուսահատութեան մատնած է ժողովուրդը՝ որու մէկ մասը բռնած է արտագաղթի ճամբան, ստիպելով մեզ, որ մեր պատմական հայրենիքի հողերու դարձը պահանջելէ առաջ մտածենք եղածը՝ պահել-պահպանելու մասին: Տակաւին կայ Արցախեան ճակատը. ճիշդ է 1994- էն ի վեր լռած, բայց քաղաքական պայմաններու յեղաշրջամբ կրնայ բռնկիլ մէկ օրէն միւսը:

Այս բոլորը Մեծ Եղեռնի հարիւրամեակի սեմին՝ ծանր կացութեան կը մատնեն մեզ ու կը ջլատեն մեր հաւաքական կամբը եւ կարողութիւնները:

Միւս կողմն Սուրիական քաղաքացիական պատերազմի շրջագծէն ներս՝ Քեսապի հայութեան բռնագաղթը, Թուրքիոյ անուղղակի մեղսակցութեամբ փաստ է թէ նախկին ցեղասպանը եւ այսօրուան «քաղաքակիրթ» Թուրքիան նոյնն են եւ նպատակը չէ փոխուած, այլ միայն դերակատարները: Այս մէկը ցնցող խթան պէտք է հանդիսանայ Հայաստանի իշխանութիւններուն, չեղեալ յայտարարելու հայ-թրքական ձախողակ համաձայնագիրը:

Հարիւրամեակի սեմին, այս խորհրդածութիւնները զարթումի կոչ պէտք է ըլլան մեզի, բոլորիս: Ըլլայ Հայաստանի իշխանութիւններուն, ընդդիմութեան, հայաստանաբնակ ժողովուրդին թէ սփիւռքահայութեան:

Ճիշդ է. անցնող տասնամեակներուն մենք ունեցանք մեծ նուաճումներ: Թափ առած է պահանջատիրական շարժումը. քանդուած է լռութեան պատը, հայ դատի գրասենեակները անխոնջ կը գործեն աշխարհի չորս ծագերուն, եւ այս բոլորին փառապսակը: Հայկական պետութեան վերականգնումով եւ Արցախեան պատերազմի յաղթական ելքով նոր ոգի եւ կաղապար ստացած է հայկական հարցը:

Հայաստանի պետութիւնը, 70 տարուայ այլամերժ եւ ազատամերժ գաղափարախօսութենէ էտք, թեւերը բացաւ իր պանդուխտ զաւակներուն շնորհեց անոնց մեծագոյն պատին ու պարտականութիւնը՝ Հայաստանի քաղաքացիութիւնը. Հայ կոչուելու հպարտութիւնը եւ միեւնոյն ժամանակ որդեգրեց ցեղասպանութեան ճանաչումը, որպէս իր արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւն: Ուրախանալի եւ ոգեկոչող են այս ամէնը, սակայն դեռ երկար է մեր ճամբան ու տատասկոտ:

Անցնինք անդին. բողոքագրերու խնդրագրերու գուլիսային պահանջներու սահմանէն, տնտեսական ենթաուժը, քաղաքական գործելակերպը, ամենակարող մամուլն ու միտեան են որ կը գծեն ժամանակակից աշխարհի քաղաքական բաժանումները:

Խրիմեան հայրիկի «երկաթէ շերտեր» կը մնայ անժամանցելի երեւոյթ, որ այսօրուայ լեզուով կը նշանակէ ոչ միայն զէնք, այլեւ՝ դրամ ու լրատութիւն:

Խօսքը աւարտենք, յիշելով Մեծ Հայուն՝ Գարեգին Նժդեհի պատգամը հայ երիտասարդութեան: «Յաղթում է ուժէ՛ղը եւ ո՛չ արդարը... Վա՛յ թոյլերին»:

ՀԱՅԿԱԿԱՆ

Կարմիր Խաչը Ազրայեճանի Մէջ Այցելեց Հայ Գերիներուն

Կարմիր խաչի միջազգային կոմիտէի ներկայացուցիչները Չորեքշաբթի օր այցելեցին Ազրայեճանի մէջ պահուող հայ ռազմագերի Յակոբ Ինջիղուլեանին եւ հինգ քաղաքացիներու, ինչպէս նաեւ Գեորգեաններու ընտանիքին:



Կարմիր խաչի միջազգային կոմիտէի ազրայեճանական ներկայացուցչութենէն ԱՓԱ լրատու գործակալութեան յայտնեցին, որ Կարմիր խաչի միջոցով գերիներուն եւ անոնց հարազատներուն տեղեկութիւն փոխանցուած է:

Գեորգեաններու ընտանիքը սահմանը անցնելով ազրայեճանական կողմ անցած է 2010 թուականի յունուարին եւ երրորդ երկիր մեկնելու ցանկութիւն յայտնած է:

Զինուոր Յակոբ Ինջիղուլեան անցեալ տարուան օգոստոսին յայտնուած էր ազրայեճանական տարածքին մէջ եւ գերի բռնուած:

Մաքսային Միութեան Եւ Միասնական Տնտեսական Տարածքին Հայաստանի Անդամակցութեան Փաստաթուղթը՝ Մինչեւ 1 Յունիս

Մաքսային միութեան եւ Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու մասին փաստաթուղթը պիտի պատրաստուի մինչեւ 1 յունիս եւ պիտի ներկայացուի պետութիւններու ղեկավարներու քննարկումին Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհուրդի 29 մայիսին Ասթանայի մէջ տեղի ունենալիք նիստին ընթացքին: Այսպիսի որոշում առնուած է նախանցեալ օր Մինսքի մէջ Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհուրդի նիստին ժամանակ:

Ռուսիոյ, Պիելժոռուսիոյ եւ Ղազախստանի նախագահները հաւանութիւն տուած են Մաքսային միութեան եւ Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու միջոցառումներու ծրագիրին՝ «ճամբու քարտէս»-ի իրականացման ուղղութեամբ մինչեւ այսօր կատարուած աշխատանքին: Մասնաւորաբար, ինչպէս նշուած է նիստը հիւրընկալած Պիելժոռուսիոյ նախագահի պաշտօնական կայքին վրայ տեղադրուած հաղորդագրութեան մէջ, «ճամբու քարտէս»-ի 126 կէտերէն, որոնք պէտք է կատարուին մինչեւ փաստաթուղթի ստորագրումը, 111-ը իրականացուած են, իսկ 15-ը կ'ընդգրկուին Մաքսային միութեան եւ Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու բուն փաստաթուղթին մէջ:

Հաղորդագրութեան մէջ նաեւ նշուած է, որ Հայաստանի անդամակցութեան «ճամբու քարտէս»-ի իրականացման ընթացքը հանդիպման օրակարգի երկու կարեւոր նիւթերէն մէկն էր՝ անոնցմէ առաջինը Եւրասիական տնտեսական միութեան մասին համաձայնագիրին վրայ աշխատանքի ընթացքն էր:

Մինասեան. «Կուտակային Կենսաթոշակային Համակարգը Պէտք Է Կամաւոր Ըլլայ»

Ազգային Ժողովին մէջ ընթացող «Կուտակային կենսաթոշակներու մասին» օրէնքին մէջ լրացումներ կատարելու մասին նախագիծի քննարկման ժամանակ ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Արծուիկ Մինասեան ընդգծեց, որ թէև Սահմանադրական դատարանը զանոնք նկատած է հակասահմանադրական, սակայն այսօր ալ շարք մը կազմակերպութիւններ կը շարունակեն մարդոց ստիպել այդ վճարումները կատարել:



«Անոնք պէտք է ըլլան ոչ թէ պարտադիր, այլ կամաւոր սկզբունքով», նշեց Մինասեան՝ շարունակելով, որ ըստ օրէնքի, մինչև այսօր իրականացուած պահումները ենթակայ են վերադարձուելու:

«Անոնք պէտք է անյապաղ վերադարձուին», շեշտեց Արծուիկ Մինասեան՝ ընդգծելով, որ մինչև այսօր այն անհատները, որոնք նոյնիսկ չեն հետեւած հարկային պարտաւորութիւններուն ու չեն կատարած պարտադիր վճարումներ, ոչ մէկ իրաւաբանական պատասխանատուութիւն պէտք է կրեն:

Արծուիկ Մինասեան նշեց շարք մը իրաւական հիմնաւորումներ եւ աւելցուց , որ այսօր աշխատակիցի սեփականութիւն հանդիսացող աշխատավարձը կը սահմանափակուի իր կամքին հակառակ, ինչ որ հակասահմանադրական է: «Սահմանադրական դատարանի որոշումին համաձայն, այդ որոշումը այլևս հակասահմանադրական է», ըսաւ պատգամաւորը:

Ըստ Մինասեանի, վերլուծութիւնները ցոյց կու տան, որ պարտադիր վճարողներու թիւը Հայաստանի մէջ կը կազմէ աւելի քան 270 հազար, իսկ իրաւաբանական ու ֆիզիքական անձերու եւ կազմակերպութիւններու թիւը կը գերազանցէ քանի մը տասնեակ հազարը:

«Ասիկա նոյնպէս հակասահմանադրական կը նկատուի», նշեց Արծուիկ Մինասեան:

Երեք Նոր Նշանակումներ՝ Հայաստանի Կառավարութեան Մէջ

Չորեքշաբթի օր Հայաստանի Հանրապետութեան նախագահ Մերժ Սարգսեանի ստորագրած հրամանագիրներով Արամայիս Գրիգորեան նշանակուեցաւ բնապահպանութեան նախարար, Յովհաննէս Մանուկեան՝ արդարադատութեան նախարար, իսկ Երուանդ Զախարեան՝ ուժանիւթի նախարար:

Աւելի ուշ, Չորեքշաբթի օր անջատ այլ հրամանագիրներով Արամայիս Գրիգորեան ազատ կացուցուեցաւ Արարատի մարզպետի պաշտօնէն, Յովհաննէս Մանուկեան՝ Վրաստանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանի պաշտօնէն, իսկ Երուանդ Զախարեան՝ Կառավարութեան կից անշարժ գոյքերու արձանագրութեանց պետական կոմիտէի նախագահի պաշտօնէն:

Գալուստ Սահակեան Դարձաւ Ազգային Ժողովի Նախագահ

Հայաստանի խորհրդարանը Չորեքշաբթի օր ձայներու 101 թեր, 3 դէմ յարաբերակցութեամբ Ազգային ժողովի նախագահ ընտրեց Գալուստ Սահակեանը:

Ուշագրաւ է, որ նախքան փակ, գաղտնի քուէարկութեան արդիւնքներուն հրապարակումը, արդէն իսկ հանրապետական պատգամաւորները կը շնորհաւորէին Սահակեանը:

Քուէարկութեան մասնակցեցան նաեւ ոչ իշխանական Բարգաւաճ Հայաստան եւ Օրինաց երկիր խմբակցութիւններու պատգամաւորները: Բարգաւաճ Հայաստան խմբակցութեան քարտուղար Նայիրա Զոհրապեան «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին յայտնեց, որ խմբակցութեան անդամներուն ազատութիւն տրուած է քուէարկելու իրենց խիղճով:



Այսպիսով, Ազգային ժողովի նախագահ դարձաւ Գալուստ Սահակեան: Ան բազմեցաւ խորհրդարանի նախագահի աթոռին, ապա շնորհակալութիւն յայտնեց Ազգային ժողովին, իշխող Հանրապետական կուսակցութեան, ինչպէս նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին՝ իր թեկնածութիւնը այդ պաշտօնին առաջադրելու համար: Ան շնորհակալութիւն յայտնեց իրեն քուէարկող խմբակցութիւններուն, ինչպէս նաեւ քուէարկութեան չմասնակցած խմբակցութիւններուն:

Հայ ազգային քննկրեսէն քուէարկութեան մասնակցեցաւ Նիկոլ Փաշինեան, որ հակառակ պոլլքոթի մասին Հայ ազգային քննկրեսի որոշման, մասնակցեցաւ, որովհետեւ «պէտք էր դէմ քուէարկել Գալուստ Սահակեանին»:

Սահակեան իր խօսքին մէջ յայտնեց, որ ինք պայքարող մարդ է, կը սիրէ պայքարիլ եւ համոզուած է, որ անձը ինքզինք աւելի ամուր կը զգայ՝ պայքարի իբրեւ արդիւնք ձեռքբերումներ ունենալով:

Գալուստ Սահակեան 66 տարեկան է, մասնագիտութեամբ՝ բանասէր, աւարտած է Երեւանի պետական համալսարանը: Աշխատանքային ասպարէզը սկսած է 1970-ականներուն՝ իբրեւ փականագործ Երեւանի մետաքսի գործարանին մէջ, յետոյ աշխատած է երեւանեան տարբեր դպրոցներու մէջ՝ իբրեւ ուսուցիչ, փոխտնօրէն եւ տնօրէն: 1990-ականներու սկիզբները Սահակեան եղած է Երեւանի Մաշտոցի Շրջանային խորհուրդի գործադիր կոմիտէի նախագահի տեղակալ եւ 1995 թուականէն մինչեւ այսօր անընդմէջ ընտրուած է պատգամաւոր՝ Հանրապետութիւն, Միասնութիւն, Հանրապետական խմբակցութիւններու կազմին մէջ: Տարիներ շարունակ գլխաւորած է Հանրապետական խմբակցութիւնը եւ իշխող կուսակցութեան փոխնախագահն է:

www.aztarar.com

Ուորլիք. «Միացեալ Նահանգներ Կ'աջակցին Հայաստանի Եւ Ազրպէյճանի Ժողովուրդներուն Միջեւ Վստահութեան Մթնոլորտի Հաստատման Ուղղուած Ծրագիրներուն»

ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիք «Թուիթըր» ընկերային ցանցի իր էջին վրայ գրած է, որ Միացեալ Նահանգներ կ'աջակցին Ազրպէյճանի եւ Հայաստանի ժողովուրդներուն միջեւ վստահութեան եւ փոխըմբռնման մթնոլորտի հաստատման ուղղուած ծրագիրներուն:

Նշենք, որ ամերիկացի համանախագահը «Թուիթըր»-ի վրայ իր վերջին գրութեան մէջ նշած էր, որ մայիսին Լոս Անճելըսի մէջ հանդիպում պիտի ունենայ ամերիկահայ համայնքին հետ, իսկ Հիուսթընի մէջ ազրպէյճանական համայնքին հետ՝ քննարկելու համար Լեռնային Ղարաբաղի հարցը:

Ուրուկուէյի Խորհրդարանը Յարգանքի Տուրք Մատուցեց Հայոց Ցեղասպանութեան Յիշատակին

Կազմակերպութեամբ Ուրուկուէյի օրէնսդիր մարմինի եւ ՀՅԴ Ուրուկուէյի Հայ դատի յանձնախումբին՝ 13-րդ տարին ըլլալով Ուրուկուէյի Ծերակոյտի նախասրահին մէջ կատարուեցաւ ոգեկոչման ձեռնարկ, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով թէ՛ պետական, թէ՛ դիւանագիտական անձնաւորութիւններ, որոնց շարքին էին ՀՅԴ Բիւրոյի անդամ Մարիօ Նալպանտեան եւ ՀՅԴ Հարաւային Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խաչիկ Տէր Ղուկասեան, Ուրուկուէյի գրօսաշրջութեան նախարար Լիլիան Քէշիշեան, մշակոյթի փոխնախարար փրոֆ. Օսքար Կոմեզ, ինչպէս նաեւ հոծ բազմութիւն մը: Առաջին խօսք առնողները եղան Ուրուկուէյի խորհրդարանի նախագահ Անիպալ Պէռէյրա եւ կուսակցութիւններու պատգամաւորներ, որոնք ներկայացուած են խորհրդարանին մէջ:

Բոլոր խօսք առնողներն ալ, նախ իրենց անվերապահ զօրակցութիւնը եւ համագործակցութիւնը յայտնելէ ետք Հայ դատին, պատմական ակնարկ մը նետեցին 1915-ի դէպքերուն եւ անոնց պատճառած ահաւոր արդիւնքին, որուն իբրեւ գոհ մէկուկէս միլիոն անմեղ հայեր վայրագօրէն սպանդի ենթարկուեցան թուրք պետութեան կողմէ: Անոնք կարծիք յայտնեցին նաեւ այդ օրերու հզօր պետութիւններու քաղաքական շահերուն եւ ի վնաս հայութեան իրենց ունեցած դերին մասին: Բոլոր բանախօսներն ալ շեշտեցին, որ միջազգային ընտանիքը պատասխանատուութիւնը պէտք է ստանձնէ ստիպելու Թուրքիոյ կառավարութեան, որպէսզի ոչ միայն ճանչնայ մարդկութեան դէմ իր գործադրած ոճիրը, այլ նաեւ անոր հետեւանքներուն շուրջ քայլերու դիմէ՝ այդպիսով ճամբայ բանալով երկու երկիրներուն միջեւ իսկական խաղաղութեան:

Ձեռնարկի ատարտին, Ուրուկուէյի Հայ դատի յանձնախումբին խօսքը փոխանցեց երիտասարդ տոքթ. Տանիէլ Աւետեան:

Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկները հովանաւորեց Ուրուկուէյահայ բոլոր կազմակերպութիւններուն կողմէ հիմնուած 100-ամեակի յանձնախումբը:

ԱՆՆՄԱՆՈՒՄ

Աւելի Քան Որեւէ Ժամանակ Մօտ Է Աշխատատեղերու Տեսլականին Իրականացումը

Մարդկությունը հասած է ճարտարարուեստական զարգացման բարձրակետի մը, սակայն շատ յաճախ մարդկային փոխարարությունները կը յատկանշուին ստրկատիրական ժամանակաշրջանի երեւոյթներով: Այսօր ալ առկայ է իշխողի եւ իշխուողի, շահագործողի եւ շահագործուողի, տիրապետողի եւ տիրապետուողի երեւոյթը, ինչպէս հաւաքականություններուն, նոյնպէս նաեւ անհատներուն միջեւ: Եւ փոխանակ այս երեւոյթը մեղմանալու, ընդհակառակն՝ աւելի եւս կը խորանայ. աւելի եւս կը խորանայ վիւր իշխող ու իշխուող դասակարգերուն միջեւ, ծայրայեղ հարուստին եւ ծայրայեղ աղքատին միջեւ, աշխատանքը շահագործող գործատերերուն ու մեծ դրամատերերուն եւ բարիք արտադրող մտքի ու ձեռքի աշխատատեղերուն միջեւ:



Այսօր Աշխատատեղերու հետ համերաշխութեան միջազգային օրն է դարձեալ: Այսօր տօնն է մարդկութեան սեւ մեծամասնութեան՝ ճնշուածներուն, իրաւազրկեալներուն, սահմանափակ եկամուտներու տէր անձերուն, իրենց գործատէրիներուն մէջ ահաւոր պայմաններու ներքեւ աշխատողներուն: Բայց այսօր մանաւանդ ծննդեան տօնն է աշխատատեղական միջազգային շարժումին, որուն պատմությունը այդքան ալ հեզասահ չէ ընթացած երբեք: Այդ պատմութեան էջերը ներկուած են բազմահազար զոհերու արիւնով, աշխատատեղական ձեռքբերումներ ունենալու համար անհրաժեշտ եղած է անտէղիտայի պայքար մղել աշխատանքը շահագործող դասակարգերու ներկայացուցիչներուն դէմ եւ այդ պայքարին ընթացքին աշխատատեղ ընդհանրությունը նաեւ ստիպուած եղած է պայքարելու իր ազգային ազատագրման համար: Մէկ խօսքով, պատմութեան ընթացքին մարդոց ընկերային-տնտեսական ազատագրումը զուգահեռ ընթացած է ազգային ազատագրութեան համար տարուած պայքարին հետ:

Այսօր գերազանցապէս ընկերային պահանջատիրական պայքարի օրն է, զանգուածներուն դարձեալ փողոց իջնելու օրն է: Տօն է, բայց ոչ թէ սուրբերու առջեւ խունկ ծխելու ու մոմ վառելու համար: Տօն է՝ վառ ապագայի ու արժանապատիւ աշխատանքի նկատմամբ մարդկութեան երազանքը իրականացած տեսնելու վճռականությունը վերահաստատելու համար: Երբ մարդիկ տօն կ'ըսեն, յաճախ կը հասկնան արձակուրդ, գոյնզգոյն հագուստներ, խրախուսիւն եւ հանդիսություններ, սակայն այս միակ տօնն է, որուն ընթացքին աշխատատեղ դասակարգը եւ անոր դաշնակից խաւերը՝ իրաւագործները, ընչազուրկները, ամէն տեսակի արհեստատեղերը, մտաւորականները եւ գիւղացիները իրաւունք չունին մէկ վայրկեան իսկ դադար առնելու՝ իրենց հասարակաց ձայնը բարձրացնելու եւ նշեալ վառ ապագային կերտման գծով մարտահրաւեր կարդալու համար:

Ապագան արժանապատիւ աշխատանքինն է: Եթէ մինչեւ հիմա, հարիւրաւոր տարիներ տեւած պայքարէն ետք տակաւին կը յամենան մարդու կողմէ մարդու շահագործումը, կեղեքումը եւ տիրապետման այլ տեսակի մօտեցումները, ապա պատմութեան բնական ընթացքը անպայմանօրէն պիտի տանի հոն, ուր ստեղծուի հասարակարգ մը, ուր գոյություն չունենան խտրականություն, շահագործում եւ կեղեքում ցեղային, դասակարգային, ընկերային եւ այլ մակարդակներու վրայ:

Ապագան մտքի ու ձեռքի աշխատատեղին արժանապատիւ աշխատանքինն է: Ապագան անպայմանօրէն կեանքի բարիքները ստեղծողներունն է եւ ոչ թէ այդ բարիքները սեփականացնողներունը,

աշխատատեղերում աշխատանքը յուսկապես շահագործողներունը: Ապագան, այո՛, աշխատատեղ համեստ դասակարգինն է, որուն տիւ ու գիշեր սեւ աշխատանքին շնորհիւ է, որ մարդկութիւնը հասած է հիմակուան զարգացումին: Առանց այդ սեւ աշխատանքին, առանց գործարաններուն մէջ աշխատանքի անտանելի պայմաններու մէջ աշխատած մարդոց տքնանքին ի՞նչ յառաջդիմութիւն: Անոնց կատարած անդուլ աշխատանքին շնորհիւ է, որ նաեւ կրթութիւնն ու գիտութիւնը զարգացած են, մարդիկ իրենց պայմանները բարելաւելու պայքարին ծիրին մէջ ձգտած են յաւելեալ ուսում ստանալու, յաւելեալ գիտելիք ամբարելու, որովհետեւ ուսումը նաեւ զենք է շահագործումին ու կեղեքումին դէմ:

Մայիսի 1-ին աշխատատեղական շարժումի կարգախօսները կը մնան միեւնոյնը, ինչպէս որ էին աւելի քան դար մը առաջ՝ միջազգային ընկերվարական շարժումին մէջ: Աշխատիլ ոչ թէ սեփական կեանքը քարշ տալու ու ապրելու պարտաւորութենէն մղուած, այլ անձնական հաճոյքը բաւարարելու համար: Իւրաքանչիւրէն՝ ըստ կարելոյն, իւրաքանչիւրին՝ ըստ արժանոյն: Ազատ հայրենիք, երջանիկ եւ արժանապատիւ աշխատանքով ապահովուած ժողովուրդ: Աշխատատեղեր ամբողջ աշխարհի, միացէ՛ք:

Եւ հեռու չէ երբեք այն օրը, երբ պիտի կենսագործուի աշխատատեղ ընդհանրութեան տեսլականը: Աւելի քան մօտ է այն օրը, երբ պիտի կերտուի աշխատատեղերու վառ, կարմիր ապագան՝ իրաւ ընկերվարական հասարակարգի ներքէ: Ա՛յս ցոյց կու տան տիրող դրամատիրական հասարակարգին ապրած ներքին հակասութիւնները, ասոր կը ձգտին ամբողջ աշխարհի մէջ իրենց շարքերը միաւորելու ձգտող աշխատատեղերը:

ԺԱՔ 3. ՅԱԿՈՒԵԱՆ

ԿՈՉ

Քուէթախանակ Հայութեան

Վերջերս համայն աշխարհի ուշադրութիւնը սեւեռուած է դէպի Սուրիա, ուր տեղի ունեցող մարտական գործողութիւններու հետեւանքով մեծ կորուստներ կը կրեն նաեւ այնտեղ կայք հաստատած մեր սիրելի եղբայրներն ու քոյրերը: Ամէնօրեայ հրասանդերու, նոնակներու եւ գնդակոծութիւններու պատճառով կը շատնայ զոհերուն եւ անօթեւաններուն թիւը: Իսկ սնունդի եւ կենսական անհրաժեշտութիւններու բացակայութեամբ, առաւել էւս կը դժուարանայ անոնց կեանքը:

Հետեւաբար բոլորիս պարտքն է ձեռք մեկնել Մայր Գաղութին մէջ բնակող մեր սիրելեաց՝ կարելիութեան մեծագոյն չափով օժանդակելով անոնց:

Այսու կը տեղեկացնենք, որ Ուրբաթ, 9 Մայիս 2014-ին, առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ մինչեւ երեկոյեան ժամը 9:00-ը, Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ պիտի ընդունուին մեր գաղութի սիրեցեալ զաւակներու հանգանակութիւնները, որոնք պիտի ուղղուին սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Արդ, կոչ կ'ուղղենք համայն քուէթախայութեան՝ իր մասնակցութիւնը բերելու այս սուրբ առաքելութեան, որ պէտք է անպայման դառնայ մեր առաջնահերթութիւնը:

Ի ՂԻՄԱՅ՝
ՔՈՒԷՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Հայոց Ցեղասպանության 99-ամեակի
Ֆիշատակում Եւ Բողոքի Ցոյցեր
Սփիւռքի Տարածքին**

Ժրնեւ



Ապրիլ 24-ին Ժրնեւի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ պատարագ, որուն յաջորդեց մոմավառութիւն եւ ծաղկեպսակներու զետեղում՝ եկեղեցւոյ բակին մէջ տեղադրուած հայկական խաչքար-յուշակոթողին եւ Ժրնեւի մէջ ընդունուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի հեղինակ Ժան Քլոտ Վուտրոյի յուշաքարին մօտ:

Ելոյթ ունեցան թեմի առաջնորդ Գուսան վրդ. Ալճանեան եւ Ժրնեւի Հայկական միութեան

նախագահ Նժդէհ Խաչատուրեան: Հայաստանի դեսպանորդ Սաթենիկ Աբգարեան փոխանցեց Հայաստանի դեսպան Շարլ Ազնաւուրին ուղերձը, որուն մէջ նշուած էր, որ Ցեղասպանութենէն 99 տարի ետք անգամ չկայ արդարութիւն, ճանաչում եւ իրաւունքներու վերադարձ. ապա տեղի ունեցաւ յիշատակի երեկոյ, որուն ընթացքին ցուցադրուեցաւ բեմադրիչ Սիւզան Խարտալեանի «Տատիկիս դաջուածքները» ժապաւենը:

Ապրիլ 24-ին Ժրնեւի հանրային պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի կայանները անդրադարձան Հայոց ցեղասպանութեան թեմային՝ ներկայացնելով 1915-ի իրադարձութիւնները, նաեւ՝ դեսպան Ազնաւուրի եւ համայնքային կառոյցներու ղեկավարներու եւ հայ երիտասարդութեան հետ հարցազրոյցները:

Փարիզ

Նախաձեռնութեամբ Փարիզի նորընտիր քաղաքապետ Անն Իտալկոյի, 24 Ապրիլին Փարիզի քաղաքապետարանի հանդիսութիւններու սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած արանդական ձեռնարկը:



Բացման խօսքով հանդէս եկաւ քաղաքապետ Անն Իտալկոն, որ ընդգծեց Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումին անհրաժեշտութիւնը: Ան նաեւ անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի շրջագիծէն ներս մայրաքաղաքի իշխանութիւններուն կողմէ տեղի ունենալիք ձեռնարկներուն մասին:

Այնուհետեւ ելոյթներով հանդէս եկան Ֆրանսահայ կազմակերպութիւններու համակարգման խորհուրդի համանախագահներ Ֆրանք Փափագեան եւ Արա Թորանեան, որոնք ընդգծեցին Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ ժխտողական կեցուածքին անարդիւնաւտ ըլլալը:

Ձեռնարկին եզրափակիչ խօսքով հանդես եկա Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Վիգէն Չիթեճեան: Ան նկատել տուաւ, որ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին հաւատարմութիւնը, մարդու եւ ժողովուրդներու համընդհանուր իրաւունքներու եւ արժէքներու նուիրուածութիւնը Ֆրանսայի մեծութեան վկայութիւններն են:

Ռումանիա

Ապրիլ 23-ին Ռումանիոյ խորհրդարանի պալատներուն մէջ Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող յայտարարութիւններով հանդես եկան Ռումանիոյ հայոց միութեան նախագահ Վարուժան Ոսկանեան եւ Պատգամաւորներու պալատի անդամ, ազգային փոքրամասնութիւններու խումբի ղեկավար Վարուժան Փամպուքճեան, որ կոչ ուղղեց 100-ամեակի սեմին համատեղել ջանքերը Թուրքիոյ ժխտողականութեան կեցուածքէն դուրս բերելու համար:



Ռումանիոյ TVR1 հեռատեսիլի կայանը Ապրիլի 24-ի երեկոյեան ուղիղ սփռումով մէկուկէս ժամ տեւողութեամբ յայտագիր ներկայացուց՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան: Վարուժան Ոսկանեան երախտագիտութիւն յայտնեց գաղթական հայերու նկատմամբ Ռումանիոյ կառավարութեան մարդասիրական վերաբերմունքին համար՝ միաժամանակ նշելով, որ Հայոց ցեղասպանութեան հարցը ներկայիս բացակայ է ռումանական քաղաքական օրակարգէն:

Ապրիլ 24-ի երեկոյեան ցոյց տեղի ունեցաւ Պուրբէշի Յեղափոխութեան հրապարակին վրայ, ուր խօսք առին Ռումանիոյ հայոց միութեան նախագահ Վարուժան Ոսկանեան, Պատգամաւորներու պալատի անդամ, ազգային փոքրամասնութիւններու խումբի ղեկավար Վարուժան Փամպուքճեան, Ռումանիոյ հայոց թեմի առաջնորդ Տարեւ Էպս. Յակոբեան, Ռումանիոյ յունական միութեան պատգամաւոր Տրակոշ Կապրիէլ Զիսոփոլ եւ գրող Վարդան Առաքելեան: Նոյն օրը առաւօտեան Պուրբէշի Ս. Միքայէլ եւ Գաբրիէլ Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, որուն աւարտին ծաղկեպսակներ գետեղուեցան Յեղասպանութեան զոհերու յիշատակի յուշարձանին դիմաց:

Եղեռնի 99-րդ տարելիցը նշուեցաւ նաեւ Ռումանիոյ հայաբնակ միւս քաղաքներուն մէջ:

Հոլանտա

Կազմակերպութեամբ Ալմելոյի Հայ Առաքելական եկեղեցոյ եւ Հոլանտայի Հայ դատի յանձնախումբին, Հոլանտայի Ալմելօ հայաշատ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 99-ամեակը ոգեկոչող ձեռնարկը, որուն ընթացքին բացումը կատարուեցաւ Յեղասպանութեան զոհերուն յիշատակը անմահացնող յուշակոթողին:



Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպան Զինիկ Աղաճանեան կարդաց սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանին պատգամը, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի ներկայացուցիչը կարդաց քաղաքապետին պատգամը, իսկ Արշակ Էպս. Խաչատրեան փոխանցեց

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ին օրհնութիւնը:

Սթրազպուրկ

Ապրիլ 24-ին Սթրազպուրկի Հանրապետութեան հրապարակի «Մեր գոհերը» յուշարձանին մօտ տեղի ունեցաւ հաւաք:



Հայաստանի մշտական ներկայացուցիչ Արմէն Պապիկեան իր խօսքին մէջ կարեւոր նկատեց Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ տարուող աշխատանքները եւ ժխտողականութեան դէմ պայքարը՝ կոչ ուղղելով համախմբուելու հետեւողական ազգային նպատակներու իրագործման համար:

Ելոյթ ունեցան նաեւ «Էլզաս-Հայաստան բարեկամութիւն» բարեգործական ընկերութեան նախագահ Փիեռ Զուլումեան, Սթրազպուրկի փոխքաղաքապետը, հրեական, քրտական եւ ռուսնոստական կառոյցներու ներկայացուցիչները:

Փոխքաղաքապետ Նաւել Ռաֆիկ-Էլմրիսի իր խօսքին մէջ նշեց, որ դեսպան Պապիկեանի միջնորդութեամբ Սթրազպուրկի քաղաքային իշխանութիւնները ընդունած են Սթրազպուրկի մէջ հայկական խաչքար տեղադրելու խնդրանքը:

Հանրապետութեան հրապարակէն հաւաքի մասնակիցները քալեցին դէպի Սթրազպուրկի Ս. Մատլէն եկեղեցի, ուր մատուցուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

Ուրուկուէյ



Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներու ծիրէն ներս գաղութի երիտասարդական միաւորները կազմակերպեցին, արդէն ասանդութիւն դարձած, «ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» ջահերով ելոյթ:

Մայրաքաղաքի Անկախութեան հրապարակէն մինչեւ քաղաքապետարանի շրջափակը, աւելի քան չորս քմ. երթը անցաւ գլխաւոր պողոտայէն՝ ժամանակի մը համար կասեցնելով երթեւեկութիւնը:

Լայն պաստառներ եւ հայկական ու տեղական դրօշներ պարզած հարիւրաւոր հայորդիներ մեծ ուշադրութեան առարկայ դարձան, որոնց հետ այս տարի մասնակցեցան նաեւ հրեայ համայնքի եւ բնիկ հնդիկներու ժառանգներ, պետական ներկայացուցիչներ եւ առհասարակ ուրուկուէյցի քաղաքացիներ:

Երիտասարդ մը կոչով ելոյթ ունեցաւ՝ շեշտելով, որ մեր պայքարը պիտի շարունակուի մինչեւ վերջնական հատուցում եւ մեր պապենական հողերու վերադարձ իրենց իրաւական տիրոջ՝ հայ ժողովուրդին:

ԿՆՈՋԱԿԱՆ

Ուտելիքներ, Որոնք Մարդս Աւելի Երջանիկ Կը Դարձնեն

Բրիտանացի գիտնականներ եւ սննդագէտներ կատարած են հետազոտութիւն մը՝ պարզելու համար, թէ ո՞ր ուտելիքները մարդս աւելի երջանիկ կը դարձնեն:



- Այսպէս, 3-րդ դիրքը գրաւած են կարմիր եւ սեւ ձկնկիթները: Փորձագէտները կ'ենթադրեն, որ ասիկա պայմանաւորուած է ոչ այնքան համային, որքան հոգեբանական պատճառներով: Ձկնկիթը առհասարակ կ'ապուած է բարեկեցութեան եւ առաւելութեան զգացումներուն հետ:

- Երկրորդ դիրքը գրաւած են քաղցրաւենիքները՝ տուրմը եւ կարկանդակները:

- Իսկ առաջին տեղը՝ գետնախնձորը, անշո՛ւշտ... տապկուած: Այո՛, տապկուած գետնախնձորը այն հրաշք ուտելիքն է, որ մի՛շտ համեղ է եւ կը յառաջացնէ երջանկութեան լիարժէք զգացողութիւն:

Չարգացած Կիները Աւելի Երկար Կ'ապրին



Ամերիկացի գիտնականներ յանգած են այն եզրակացութեան, որ կնոջ զարգացումը կ'ազդէ անոր կեանքի տևողութեան վրայ:

Գիտնականները հետեւելով 45-84 տարեկան 46 հազար կիներու՝ զանոնք բաժնած են 2 խումբի. առաջին խումբը ընդգրկած է անոնք, որոնք չեն աւարտած դպրոցը, իսկ երկրորդը՝ կիներ, որոնք առնուազն միջնակարգի մակարդակի ուսում ստացած են: Գիտնականներ եկած են այն եզրակացութեան, որ իզական սեռի ներկայացուցիչներէն անոնք, որոնք չունին միջնակարգ կրթութիւն, կը մահանան 66 առ հարիւրով աւելի յաճախ, քան անոնք, որոնք չեն աւարտած դպրոցը:

9 տարի տեւած ուսումնասիրութեան ընթացքին նկատի առնուած են նաեւ վերոյիշեալ կիներուն ընտանեկան կարգավիճակը, զբաղումները, նիւթական վիճակը, առկայութիւնը, վնասակար սովորութիւնները եւ

բժշկական ապահովագրութեան ճարպակալման մակարդակը:

Դրամական Խնդիրները Կ'ազդեն Մարդու Ուշիմութեան Քանորդին Վրայ


«Պիսնես Ուիք» թերթին մէջ լոյս տեսած յօդուածի մը համաձայն, մարդիկ, որոնք մշտապէս կը մտածեն հաշիւներու եւ դրամի պակասի մասին, կը տառապին սթրեսէ. բայց ասիկա միակ հարցը չէ. այս մարդոց մօտ նաեւ կը նուազի ուշիմութեան քանորդի (IQ) մակարդակը:

Այսպէս, գիտնականներ երկար տարիներու վրայ կատարած են լուրջ ուսումնասիրութիւններ՝ դրամական դժուարութիւն չունեցող եւ եկամուտի լուրջ հարցեր ունեցող մարդոց վրայ:

Ուսումնասիրութիւնները յանգած են այն եզրակացութեան, որ առաջին խումբի մարդոց մօտ ուշիմութեան քանորդի մակարդակը 25 տոկոսով բարձրացած է, մինչ երկրորդին մօտ՝ 13 տոկոսով նուազած: Պատճառը պարզապէս այն է, որ մտահոգութիւնն ու սթրեսը կը խլեն մարդու ամբողջ ուշադրութիւնը:



ԻՆչը Կիւնը Կը Ծերացնէ Տարիքէն Առաջ



Բրիտանացի գիտնականները, բժիշկ Էնտրու Մայրքստմի գլխաւորութեամբ, կազմած են ցանկը այն գործօններէն, որոնց պատճառով կիւնը իր տարիքէն 10 տարի աւելի մեծ կ'երեւի:

Ծանօթ է բոլորիս, որ վատ սովորութիւնները կը ծերացնեն կիւնը, սակայն վերոյիշեալ ցանկին վրայ յստակօրէն պարզուած է, թէ ինչէն էլ որքանով կ'նոջ արտաքինը կը տուժէ:

Էնտրու Մայրքստմի գլխաւորած հետազօտութեան մասնակցած են 585 կիւն՝ 35-70 տարեկան, տարբեր միջավայրերէ եկած: Մասնակիցները պատասխանած են իրենց վարած կենսակերպին առնչուող հարցումներու, որմէ ետք մասնագէտները յայտնած են, թէ ի՛նչ տարիքի տեսք ունի տուեալ կիւնը:

Հետազօտութեան ւարտին պարզուած է, որ ոչ միայն խմիչքն ու ծխախոտը կ'ազդեն կ'նոջ արտաքինին վրայ, այլ նաեւ՝ սխալ սննդականոնը, արեւին անդրմանիշակազոյն ճառագայթներուն երկար ժամեր պարզուիլը եւ արհեստական լուսաւորութեան նիստերը:

Մայրքստմ կ'ընդգծէ, որ կ'նոջ տեսքը 50 տոկոսով կախուած է ժառանգական տուեալներէ եւ միայն 33 տոկոսով՝ կենսակերպէն:

www.armenianprelacykw.org

Գեղարուեստական Երեկոյ

Հովանաւորութեամբ՝
Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ
Գերայ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպուեանի

Կազմակերպութեամբ՝

Հայ Օգնութեան Միութեան Քուէթի Մեկուսի Մասնաճիւղի

ՀՕՄ ՔՄՄ-ի վարչութիւնը մեծ հաճոյքով կը տեղեկացնէ, թէ պատրաստած է գեղարուեստական , շատ կոկիկ յայտագիր մը, որ պիտի ներկայացուի Ուրբաթ, 2 Մայիս 2014-ի երեկոյեան ժամը 7:30-ին, (Ալ Մանկաֆի) Անգլիական Cambridge School-ի սրահէն ներս:

Հանդիսատեսը հմայող իրենց հրապուրիչ պարերով ելոյթ կ'ունենան Աւագ եւ Կրտսեր << Շաքէ >> Պարախումբերը
ղեկավարութեամբ՝

Պարարուեստի հմուտ, հայրենի տաղանդաւոր պարուսոյց՝

Տիկ.Աննա Մանուկեանի

եւ

Կենդանի երաժշտութեան ընկերակցութեամբ,փունջ մը
հայկական ժողովրդական երգերու ներկայացումով ելոյթ
կ'ունենայ

Քուէթահայ արուեստասէր երիտասարդներ

Ղեկավարութեամբ՝

Պրն. Քեոի Սարգիսեանի

Ձեզ կը վստահեցնենք ,թէ տոյն յայտագրին ընդմէջէն , հայ արուեստի
ծարաւը ունեցող ձեր հոգիները պիտի յագենան:Շտապեցէք եւ
ապահովեցէք ձեր տոմսերը դիմելով հետեւեալ ընկերուհիներուն :

Թալին Չամսարեան – 67083161

Միւզան Քէօշկերեան – 66607512